«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները ուսումնադաստիարակչական աշխատանքերի պլանավորումը ըստ պետական կրթական չափորոշչի

Հաստատություն ՝ «Աշտարակ համայնքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ

Դաստիարակ ՝ Տաթևիկ Խոյեցյան

Ղեկավար ՝ Ժաննա Ավետիսյան

2023 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները: Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը ըստ պետական կրթական չափորոշչի 4

1.1 Ժամանակակից նախադպրոցական կրթության պահանջները և նախադպրոցականի զարգացման առանձնահատկությունները.....4

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային ոլորտներն ու կարողունակությունները.....8

Գլուխ 2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը դաստիարակի կողմից՝ դաստիարակին ներկայացվող պահանջները 10

2.1 Ուսումնական գործընթացի թեմատիկ պլանավորումը, դաստիարակի մանկավարժական աշխատանքի մեկշաբաթյա թեմատիկ պլանավորումը 10

2.2 Գործնական աշխատանք 14

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխկապակցված են, և ամեն բան սկսվում է մանկությունից: Այն, ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, ուղեկցում է նրան ողջ կյանքում: Երեխան նախադպրոցական մանկության շրջանում իրենից ներկայացնում է մեկ ամբողջական զգայարան, նա ընկալում և յուրացնում է աշխարհը՝ ընդօրինակելով իրեն անմիջական շրջապատող հարազատներից: Երջանիկ է այն երեխան, որին ուղեկցում են բանիմաց և փորձառու մանկավարժներ: Դաստիարակությունը չափազանց կարևոր գործընթաց է:

Նախադպրոցական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները համակարգված և ճիշտ կազմակերպելու գործում կարևոր նախապայման է աշխատանքների պլանավորումը: Պլանավորումը պետք է բավարարի կրթական չափորոշչի պահանջները, ներառի պարապմունքների մեթոդական ճիշտ բաշխում՝ ընդգրկելով ողջ օրվա գործունեությունը, ինչպես նաև պետք է ունենա թեմատիկ բնույթ: Պլանավորման մեթոդական հագեցվածության, մանկավարժական էթիկայի համար պիտի պատասխանատու լինեն նախադպրոցական հաստատությունում նաշխատող բոլոր մանկավարժները:

Աշխատանքի արդիականությունը

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ շեշտադրվում է նախադպրոցական կրթություն իրականացնելիս մանկավարժական աշխատողների կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան: Չափորոշչում հստակ ամրագրված են նախադպրոցական կրթության և զարգացման համար անհրաժեշտ բոլոր պահանջները, պարտադիր կարողունակությունները, որոնց պետք է տիրապետի նախադպրոցական սանը:

Աշխատանքի նպատակը

- Սույն աշխատանքի նպատակն է բացահայտել մանկապարտեզում մանկավարժական աշխատողի կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորմանը ներկայացվող պահանջները, իրականացման ուղիները:

Աշխատանքի խնդիրները

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել ՀՀ կրթական պետական չափորոշիչը, կարողունակությունները, վերջնարդյունքները:
- Ներկայացնել թեմատիկ պլանավորմանը ներկայացվող պահանջները և առանձնահատկությունները:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից, յուրաքանչյուր գլուխ ունի երկու ենթագլուխ, երկրորդ գլխի ենթագլուխը ներկայացված է գործնական աշխատանքի տեսքով, եզրակացությունից և բովանդակությունից:

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները: Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը ըստ պետական կրթական չափորոշչի

1.1 Ժամանակակից նախադպրոցական կրթության պահանջները և նախադպրոցականի զարգացման առանձնահատկությունները

Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում համարվում է շարունակական կրթության առաջին աստիճանը, որը միտված է նպաստելու նախադպրոցականի լիարժեք և համակողմանի զարգացմանը: Սանին ուղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, կարծիք հայտնելու, սեփական որոշումներ կայացնելու: Այս ամենը պատկերացնելու համար կարևոր է սիրել սանին, վստահել և հավատալ: Դաստիարակը ամենակարևոր օղակն է հանդիսանում երեխա-մանկապարտեզ փորխհարաբերությունում: Նրա կերպարը ազդում է սաների զարգացման և առանձնահատկությունների ձևավորման վրա: Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող յուրաքնչյուր մանկավարժ պետք է երեխաների համար ստեղծի և պահպանի ապահով և անվտանգ միջավայր, որտեղ երեխան կարող է բավարարել իր հետաքրքրությունները և պահանջմունքները, կազմի և իրականացնի

երեխաների զարգացմանը խթանող ուսումնական պլան, որը ներառում է երեխաների ուսումնառության և զարգացման բոլոր ոլորտները, ընտանիքի հետ ստեղծի և պահպանի դրական և արդյունավետ հարաբերություններ, նպաստի յուրաքանչյուր երեխայի զարգացմանը, դիտարկի, հետազոտի երեխայի գործունեությունը համապատասխան եզրահանգումներ անի, պարզի հետաքրքրությունների օղակը և դրան համապատասխան ուղղորդի երեխային: Խրախուսի երեխային, մղում անելու՝ նպաստելով նրա առաջընթացին, զարգացմանը, ինքնավստահությանը: Որոշ երեխաներ կարող են շատ ավելի բարձր ցուցանիշ դրսևորել, քան սահմանում են չափորոշիչները, ոմսաք՝ մի քիչ ավելի ցածր: Երեխաների տվյալ տարիքին համապատասխան զրգացման և ուսումնառության հետ կապված ակնկալիքների մասին մտածելիս կևևոր է ուշադրություն դարձնել նրանց անհատական առանձնահատկություններին: Երեխաները տարբեր են՝ կախված իրենց բնածին ունակություններից, փորձից, առողջական վիճակից և սովորելու հանդեպ ունեցած վերաբերմունքից; Երեխաների միջև այսպիսի տարբերությունները բնական են:

Անհրաժեշտ է հարգանք դրսևորել այն բոլոր երեխաների նկատմամբ, որոնք կարող են տարբեր տեմպերով զարգանալ ու սովորել հասկանալ շրջապատող աշխարհը և արտահայտել իրենց սեփական զգացմունքները: Ուսումնական պարապմունքների ժամանակ հարկավոր է երեխաներին չդնել կաղապարների մեջ, թույլ տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու, խրախուսելու ինքնուրույն խոսքը, ստեղծագործականությունը, նախաձեռնողակա-նությունը, տրամաբանական մտածողությունը: Ժամանակակից հասարակության մեջ նախադպրոցական հասարակությունը՝ որպես շարունակական կրթության սկզբնական աստիճան, ընտանիքի հետ համագործակցելով, իրականացնում է նախադպրոցական տարիքի երեխայի բնականոն, ներդաշնակ և երկկողմանի զրգացմանը:

Նախադպրոցական կրթության ռազմավարությունը կյանքի է կոչվում պարբերաբար լրամշակված ժամանակահունչ ծրագրի միջոցով, որոնց հիմնական խնդիրը երեխայակենտրոն կրթության ապահովումն է, ժամանակակից հասարակության մեջ երեխաների կյանքին նախապատրաստումը: Ծրագիրը նախատեսում է երեխաների կյանքի պահպանման, համակողմանի և ներդաշնակ

զարգացման համալիր մոտեցում՝ ազգային լավագույն ավանդույթների և երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմամբ: Նախադպրոցական տարիքի երեխայի լիարժեք անհատականության ձևավորման, դպրոցական հաջորդ ուսումնառության և ապագա աշխատանքային գործունեությանը նախապատրաստելու համար էական.

- սովորեցնել երեխաներին տիրապետել կապակցված և արտահայտիչ խոսքին, մտքերն ազատ և անկաշկանդ մայրենի լեզվով շարադրելու կարողություն,
- ուսուցումն ու կրթությունը իրականացնել կրթական չափորոշիչներին համապատասխան,
- հետևել ֆիզիկական զարգացման գործընթացին,
- ապահովել սոցիալական շփում, զարգացնել իմացական կարողությունները:

Երեխաները լավ են զարգանում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական, մտավոր և հուզական կարիքները, որտեղ նրանք պաշտպանված են զգում, արժևորվում են որպես անհատներ և ակտիվորեն ներգրավվում են նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպված բազմաբնույթ աշխատանքներում: Սաները ակտիվ սովորողներ են, նրանք ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են: Նրանք իրենց գիտելիքները և արժեքները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների, ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ մասնակցությունների միջոցով: Ս. Ֆրենն ասել է. «Հարկավոր է ոչ թե, որոշել, թե ինչ է պետք երեխաներին, այլ պետք է ուսումնասիրել երեխաների հետաքրքրություններն ու հնարավորությունները, քանի որ աշխարհն իրենցն է և իրենք պետք է կարողանան օգտագործեն իրենց կարողությունները, որովհետև աշխարհը հենց նրանց է, նրենք պետք կարողանան օգտագործել իրենց կարողություններն ու հնարավորությունները, ի վիճակի լինեն ինքնուրույն ապրեն այս աշխարհում: Այս պարագայում դաստիարակը կարող է միայն օգնել նրանց, բայց ոչ հրահանգել կամ կառավարել: Նա պետք է օգնի երեխաներին հետազոտել, ուսումնասիրել և հայտնագործել, ձեռք բերել սեփական փորձ, ինչը լիովին տարբեր է այդ ամենը

պատրաստի ստանալուց: Սեփական աշխատանքի արդյունքում ստեղծված հայտնագործությունները պետք է դարձնել փորձի փոխանակման և հաղորդակցման աղբյուր»:[1] Սաների առողջ, ներդաշնակ և համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է աշխատանքներ տանել բոլոր ոլորտների հավասարաչափ զարգացման ուղղությամբ: Այս ամենը ճիշտ կազմակերպելու և իրականացնելու համար հարկավոր է, որ մանկավարժական աշխատողները քաջածանոթ լինեն նախադպրոցական կրթության պետական չափորոշչային պահանջներին: Հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի նախասիրությունները, ունակություններն ու կարողությունները, հոգեկան և ֆիզիկական առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021 թ. մայիսի 3-ին N744 -Ն որոշմամբ հաստատեց նոր «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ»-ը: Այն կարևոր փաստաթուղթ է, որը պատք է ապահովի նախադպրոցական տարիքի երեխաների հետ իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքնարը և նախադպրոցականի դեպի դպրոց սահուն անցումը:

«Նախադպրոցական կրթական պետական չափորոշիչը հանրակրթության կրթական չափորոշչի մաս կազմող իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացնող վերջնարդյունքները, ուսումական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքների ապահովման հիմքը»:[2] Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N744-Ն որոշում: Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիմքում նախադպրոցականների կարողունակությունների վրա հիմված մոտեցումենրն են և ներառում են հիմական բնագավառները: Որպես նորմատիվային փաստաթուղթ չափորոշիչում հստակ ամրագրված են ուսումական պարապմունքների, դրանց բովանդակության, ծանրաբեռնավածության, երեխաների հետ տարվող

[1] Հ. Միտոյան, Լ. Սմբատյան « Ուսումական ձեռնարկ մանկապարտեզի համար» Էդիթ պրինտ 223էջ
[2] Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N744-Ն որոշում:

աշխատանքների, մշտադիտարկումների, կարիքների գնահատման, երախաների մասին դրույթներ:

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչային ոլորտներն ու կարողունակությունները

«Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով»:[3] Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի ձեռք բերած արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:

Նախադպրոցական կրթական կարողունակություններն են՝

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն
2. ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
5. թվային և մեդիա կարողունակություն
6. մշակութային կարողունակություն
7. մաթմատիկական և տեխնիկական կարողունակություն
8. տնտեսական կարողունակություններ
9.ֆիզիկական կարողունակություններ

Հարկ է նշել, որ այս կարողունակություններն ունեն ոլորտային ուղղվածություն և ուսուցման գործընթացում կազմում են մեկ ամբողջականություն՝ լրացնելով մեկը մյուսին: Նախադպրոցականի համար սահմանված կրթական և զարգացման

[3] Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N744-Ն որոշում:

ոլորտներից բացի չափորոշչում ամրագրված են դրանցից ակնկալվող երեխաների զարգացմանճ և կրթական վերջնարդյունքները՝ ըստ տարիքային փուլերի:

Չափորոշչի հիմքում նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունների վրա հիմված մոտեցումն է: Չափորոշիչը մանկավարժական աշխատողների համար ստեղծում է այն հիմքը, որի վրա նրանք կարող են պլանավորել ուսուցման գործընթացը: Պլանավորելիս մանկավարժների համար որպես ուղենիշ են հանդիսանում հետևյալ զարգացման ոլորտները՝

- Շարժողական ոլորտ
- Խոսքի և հաղորդակցական ոլորտ
- Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ
- Իմացական ոլորտ
- Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ

«Չափորոշիչը երեխայակենտրոն կրթության հիմքն է, որը հնարավորություն է ընձեռնում արձագանքելու երեխաների կարիքներին և հմտություններին՝ հարգելով յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը»: [4]Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N744-Ն որոշում:

Նախադպրոցական կրթության բովանդակությունն իրենից ներկայացնում է նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան զարգացման և կրթության ընդհանուր նպատակներից բխող գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորում:

Հետևապես կարող ենք նշել, որ նախադպրոցական հաստատությունում իրականացվող յուրաքանչյուր ուսումնական պարապմունք պլանավորելիս հիմքը պետք է լինի չափորոշիչ: Չափորոշչում ամրագրված սկզբունքները պարտադիր են նախադպրոցական կրթության պլանավորման համար:

[4] Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N744-Ն որոշում:

Արդեն նշվեց, որ նախադպրոցական կրթությանբև զարգացման ընթացքը պետք է լինի երեխայակենտրոն, հաշվի առնեն նրանց հետ տարվող անհատակողմնորոշիչ աշխատանքները, վերլուծվեն մշտադիտարկումների արդյունքները:

Նախադպրոցական հաստատություններում անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն երեխաների բնականոն ինտեգրումը, նրանց սոցիալականացումը: Այս ամենն ապահովելու համար մանկավարժական աշխատողը պետք է տիրապետի ժամանակակինց մանկավարժական մոտեցումներին, ունենա կոմունիկատիվ և մասնագիտական հմտություններ, պարբերաբար զբաղվի ինքնակրթությամբ և լինի նախաձեռնող:

Նախադպրոցական կրթության բարեփոխումները կոչված են նպաստելու յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ուբդրսևորմանը և զարգացման համար պայմանների ստեղծմանը: Հարկ է նշել, որ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի իրականացումը պարտադիր է նախադպրոցական հաստատություններիբկողմից՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

Գլուխ 2. Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը դաստիարակի կողմից՝ դաստիարակին ներկայացվող պահանջները

2.1 Ուսումական գործընթացի թեմատիկ պլանավորումը, դաստիարակի մանկավարժական աշխատանքի մեկշաբաթյա թեմատիկ պլանավորումը

Նախադպրոցական ուսումական հաստատությունում ուսուցման ու զարգացման գործընթացի պլանավորումս կարևոր նախապայման է, որը առաջին հերթին հստակ նախանշում է նպատակները, խնդիրները և ակնկալվող վերջնարդյունքները, որ արդյունքում մանկավարժիաշխատանքը դառնում է պլանավորված և կանոնակարգված: Հայաստանի Հանրապետության «Նախադպրոցական կրթության մասին օրենք«-ում, հոդված 17, կետ 7-ում ամրագրված «ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելու համար կիրառելու տարբերակայի ձևեր՝ պահպանելով պլանավորմանը ներկայացվող սկզբունքներն ու

չափանիշները»:[5] Պլանավորումը բարձրացնում է մանկավարժի մասնագիտական որակները, թույլ տալիս, որ վերջինս փնտրի ու գտնի ուսուցման բովանդակությանը համապատասխանող խթանիչ միջոցներ՝ պարապմունքն էլ ավելի հետաքրքիր դարձնելու համար:

Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժը, ուսումնական պարապմունքը պլանավորելիս, հիմք է ընդունում
ինտեգրված ուսուցումը: Այս պարագայում ուսումնական պարապմունքը պլանավորվում է մի քանի մանկավարժների կողմից, մեկ պարապմունքի նախադպրոցական կրթական չափորոշչային ոլորտները, կրթության բովանդակությունը և պահանջվող կարողունակությունները:
Իրենց հերթին ծավալային պլանավորում են պահանջում նաև հանդեսները, նպատակային էքսկուրսիաները, որոնց ընթացքում նույնպես ապահովվում է նախադպրոցականների կրթության ու զարգացման գործընթացը:

Նախադպրոցական կրթության մեջ կարևոր բաղադրիչ է նաև շրջանակներում իրականացվում է բազմաբաղադրիչ մոտեցում:

Թեմատիկ ուսուցումը ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև եղած կապերի ստեղծումն է, ինտեգրում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումնասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են բովանդակային միավորներ ծրագրի տարբեր բաժիններից:
Թեմատիկ ուսուցման ծրագիրն այնպես է կազմվում, որ երեխաները տեսնում և հասկանում եյ առարկայական ոլորտների միջև եղած կապերը և նրանց կապը կյանքի հետ:
Ուսումնասիրվող թեման ապահովում է երեխայի շահագրգռվածությունն ու հետաքրքրությունը տվյալ թեմայի նկատմամբ: Թեմատիկ պլանավորման ժամանակ մանկավարժը պետք է հաշվի առնի հետևյալը.

- Արդյո՞ք թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին:
- Ընտրված թեման նպաստո՞ւմ է երևակայության ու ստեղծագործական մտածողության խթանմանը:

[5] ՀՀ «Նախադպրոցական կրթության մասին» օրենք, հոդված 17, կետ՝ 7:

- Երեխաները հնարավորություն կունենա՞ն ավելացնելուբիրենց գիտելիքները և փորձը առարկաների, մարդկանց և իրոնց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Դաստիարակներն իրենց թեմատիկ պլանները կազմելիս օգտագործումֆ են տարբեր եղանակներ, իսկ գրավոր պլաններն օգնում են համակարգել աշխատանքը: Թեմատիկ պլանը կազմելիս դաստիարկը պետք է հաշվի առնել չափորոշչային պահանջները և ըստ գնահատման հնարավորություն կտա մանկավարժին ճիշտ պլանավորել թեմայի յուրաքանչյուր պարապմունք վստահ լինելով չափորոշչային պահանջները կատարելու մեջ:

Պլանավորելով շաբաթվա ընթացքում կատարվելիք թեմաների պլանը պետք է առանձնացնել ուսումֆական հիմֆական նպատակները, իսկ նպատակներին հասնելու համար պետք է ընտրել մեթոդներ և հնարներ: Ուսուցանվող պարապմունքների կառուցվածքային մոդելը հնարավորություն է տալի դաստիարակի տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների ուսուցման խթանման, իմաստի ընկալման, կշռադատման միջոցով հասնել նախատեսված կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակների:

Պարապմունքի յուրաքանչյուր փուլում դաստիարակը ԽԻԿ համակարգով առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքնի հասնելու համար: Ուսուցման առավել արդյունավետ տեսակը միավորված, ինտեգրված, ամբողջական մոտեցումֆ է: Հատկապես վաղ շրջանում երեխաների գիտելիքների, կարողությունների զարգացումը երեխայի գործունեությունը պետք է կազմակերպել միասնական, միավորվածինտեգրված ծրագրով: Փոքր տարիքում երեխային տրվող տեղեկությունները, ինչպես նաև նրա գործունեության տեսակներըվչպետք էվտարանջատվեն տարբեր բնագավառների: Իհարկե, այս տեսանկյունեց առավել արդյունավետ է համարվում թեմատիկ ուսուցումը, որը ենթադրում ուսումֆական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծում՝ մեկ հետաքրքիր նյութ ուսումֆասիրելու միջոցով, որի մեջ ամփոփված են բովանդակային միավոր ծրագրի տարբեր բաժիններից:

Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխայի հետաքրքրություններն կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրությունը թեմայի նկատմամբ: Թեմատիկ պլանավորում կատարելիս մանկավարժը կարևորում է գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույնություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն և այլն:

Քանի որ միևնույն գործողությունը սաների մոտ զարգացնում է մի քանի կարողություն և հմտություն, ապա օրվա կամ շաբաթվա ընթացքոում միավորելով դրանք նպաստում են սաների զարգացմանը: Երբեմն դժվար է լինում տվյալ գործողության մեջ առնձնացնելը կոնկրետ հմտություն և չափորոշչային պահանջներ, բայց հաջորդաբար պլանավորված աշխատանքը շաբաթվա ընթացքում պարապմունքից պարապմունք դաստիարակը կատարելագործում է սաների մոտ անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման և չափորոշչային պահանջների կատարմանը:

Թեմատիկ ուսուցման ժամանակ միառժամանակ ուսումնասիրվում և ուսուցանվում է տվյալ թեման մի քանի տեսանկյունից, ուսումնասիրում, հասկանում, հաշվում, փորձում և փորձարկում է, նկարում է, ծեփում, խաղում , երգում և այլն:

Թեմատիկ պարապմունքները որևէ կոնկրետ թեմա ուսումնասիրելու ընթացքում կարևորում են գործողության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածություն, նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացմանը և չի սահմանափակվում մեկ առանձին ոլորտով:

Թեմատիկ ուսուցումից շահում են բոլորը: Ծնողները ներգրավվում եկ կատարվող աշխատանքների մեջ և տեղյակ են, թե ինչ անում և սովորում իրենց երեխաները: Դաստիարակներին ոգևորում են պարապմունքների նոր բովանդակությունը և նոր մեթոդներ կիրառելու համար ստեղծված հնարավորություններ:

Երեխաները, իրենց հերթին, դառնում են գիտակ, բանիմաց, ինքնատիպ մտածողներ, որ ազատ են դրսևորվելու իրենց ստացած գիտելիքներում:

2.2 Գործնական աշխատանք

Օրվա կանոնակարգը սաների կյանքի կազմակերպաման համակողմանի զարգացման, առողջության ամրապնդման և դաստիարակության կարևոր պայմանն է: Նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունների ապահովման անհրժեշտությունից ելնելով՝ միջին խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքն արտացոլվում է 6 ծրագրային բաղադրիչում

- Խոսքի զարգացում (ԽԶ)
- Ֆիզկուլտուրա (Ֆ)
- Ինձ շրջապատող աշխարհը (ԻՇԱ)
- Մաթեմատիկական տարրական պատկերացումներ (ՄՏՊ)
- Երաժշտություն (Ե)
- Կերպարվեստային կառուցողական աշխատանք (ԿԿԱ)

Ծրագրային այս բաղադրիչների զտումը կարևոր պայման է, դրանք սերտորեն փոխկապակցված են: Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում: Պարապմունքների բաշխաման ցանկի կազման ժամանակ անհրաժեշտ է պահպանել ֆիզիկական և մտավոր աշխատանքների ճիշտ հերթագայումը, ծանրաբեռնվածության ներդաշնակ բաշխումը:

Ստորև ներկայացում եմ մեկշաբաթյա թեմատիկ պլանավորման աշխատանքները «Աշտարակ համայնքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում 2023-2024 ուստարվա առաջին եռամսյակում:

Ծրագրային բաղադրիչը՝ ԻՇԱ

Թեմա՝ «Թթուդրուկ»

Նպատակը՝ հաղորդել տարրական գիտելիքներ բանջարեղենի օգտակարության մասին, սովորեցնել նկարագրելիս օգտագործել բնորոշիչ բառեր: **Վերջնարդյունք՝** կարևորի մարդու աշխատանքը բնության մեջ: **Կապը չափորոշչի հետ՝** Ի(բ) մասնակցում է համատեղ կազմակերպվող աշխատանքներին:

Նախքան բանջարեղենները տարաների մեջ տեղավորելը երեխաների հետ կրկին խոսեցինք դրանց օգտակարության մասին, համտեսեցինք, քննարկեցինք թթվային բանջարեղենների տեսակները, առանձնացրեցինք և անցանք գործի:

Երեխաների ոգևորվածությանը չափ չկար. չէ՞ որ այդ ամենին իրենք հետևել էին կողքից, երբ մայրիկը կամ տատիկն էր պատրաստել, բայց ԻՇԱ-ի պարապմունքի ժամանակ հենց իրենք իրենց փոքրիկ ձեռքերով պատրաստեցին այդամենը: Դե՞, համի մասին խոսելն ավելորդ է... Հետևեցինք ընթացքին և վերջում համտեսեցինք:

:

Ծրագրային բաղադրիչը՝ ԻՇԱ

Թեմա՝ «Փորձուսուցում»

Նպատակը՝ ընդլայնել իմացական հետաքրքրությունները շրջապատող աշխարհի մասին:

Վերջնարդյունք՝ ընկալի բնության երևույթների պատճառահետևանքային տարրական կապերը:

Կապը չափորոշչի հետ ՝ԽՀ(բ) Նկարագրում է առարկաները, երևույթները, դրանց միջև եղած պարզագույն կապերը. ակտիվ խոսքում կիրառում այնպիսի բառեր, որոնք արտահայտող առարկաներն ու երևույթները երեխայի անձնական փորձում չեն եղել:

«Ինձ շրջապատող աշխարհ»-ը (ԻՇԱ) պարապմունքի ժամանակ երեխաները վերհիշեցին իրենց ծանոթ բանջարեղենների անունները, նրանց օգտակարությունը, համը, ձևը, գույնը: Շատ անգամներ եմ զրույց անցկացրել երեխաների հետ բազուկի թե՛ օգտակարության և թե՛ գույնի մասին, սակային ինչպես ասում են՝ «Ավելի լավ է մեկ անգամ տեսնեն, քան հազար անգամ լսեն» ,ծեծված, բայց ճշմարիտ խոսք է՝ տեսածն ավելի հիմնավոր է արմատավորվում: Պարապմունքի ավարտին երեխաներն ականատես եղան իրական փորձարկման:

Ծրագրային բաղադրիչը՝ ԿԿԱ

Թեմա՝ Այլընտրանքային նկարչություն

Նպատակը՝ եեխաներին ծանոթացնել բազուկից բնական ներկանյութ ստանալու կարողությունը:

Վերջնարդյունքը՝ կրառի ոչ ավանդական տեխնիկա:

Կապը չափորոշչի հետ՝ Ի (Դ) Ճանաչում է աշխարհը փորձարկումների, ինքնուրույն գործողությունների միջոցով:



Ծրագրային բաղադրիչը՝ ԿԿԱ

Թեմա՝ Ապլիկացիա՝ թղթի պատռման եղանակով գազար

Նպատակը՝ զարգացնել պատռված թղթերվ պատկեր ստանալու կարողություն:

Վերջնարդյուքնը՝ աշխատել մաքուր և կոկիկ:

Կապը չափորոշչի հետ՝ Ի(բ) մասնակցում է համատեղ կազմակերպվող աշխատանքներին և ավարտին հասցնում առաջադրանքը:

Ծրագրային բաղադրիչը՝ ԽԶ

Թեմա՝Զրույց ծանոթ բանջարեղենի մասին

Նպատակը՝ ընդլայնել երեխաների գիտելիքները բանջարեղենի, դրանց օգտակարության մասին, զարգացնել ստեղծագործական միտքը, նկարագրական խոսքը:

Վերջնարդյունքը ՝ճանաչի և անվանի բանջարեղենը:

Կապը չափորոշչի հետ՝ Ի(գ) հասակակիցների հետ համատեղ գործունեության ընթացքում դրսևորում է իմացական ակտիվություն, երևակայություն, կարծիքներ հայտնելու կարողություն:

Ծրագրային բաղադրիչը՝ ԽԶ

Թեմա՝ Ոտանավորի ուսուցում Հ. Հայրապետյան «Աշնան շուկան»

Նպատակը՝ սովորեցնել արտահայտիչ, հուզականորեն արտասանել ոտանավորը, գտվել տրամաբանական դադարներից, շեշտադրումներից:

Վերջնարդյունք՝ արտասանի բանաստեղծություններ, քառյակներ՝ համապատասխան առոգանությամբ:

Կապը չափորոշչի հետ՝ ԽՀ(ե) խոսքն արտահայտում է տարբեր արտահայտչամիջոցներով՝ փոխելով ձայնի ուժգնությունը, տեմպը, օգտվում խոսքային դադարներից:

Եզրակացություն

Կատարելով համապատասխան ուսումնասիրություններ և հետազոտելով իմ կողմից իրականացված թեմատիկ պարապմունքները՝ գալիս եմ հետևյալ եզրահանգման.

- ✓ Մանկապարտեզում ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է ուսումնասիրել նախադպրոցական կրթության չափորոշիչները, երեխաների տարիքային առանձնահատկությունները:
- ✓ Երեխաներին սովորեցնել ինքնուրույն արտահայտել մտքերը, լինել նախաձեռնող, ձեռք բերած սեփական փորձը և գիտելիքները կիրառել առօրյա գործընթացում:
- ✓ Ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորման արդյունքում ուշադրություն դարձնել երեխայակենտրոն ուսուցմանը:
- ✓ Զարգացնելով կարողունակությունները ապահովել կապը կրթական պետական չափորոշչի հետ:
- ✓ Մանկապարտեզում գործունեություն իրականացնել ռեժիմային բոլոր պահերին, ներգրավելով նաև ծնողներին:
- ✓ Ուսուցման գործընթացը պլանավորելիս ուշադրություն դարձնել նաև էքսկուրսիաներին և մշակութային այցերին:

Այսպիսով ժամանակակից կրթական համակարգը և պետական կրթական չափորոշիչները հնարավորություն եկ ընձեռում մանկավարժական աշխատողին ուսումնադաստիարակչական գործընթացի պլանավորումս իրականացնել մոր մոտեցումներով, բայց ծրագրային բաղադրիչների պահպանմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N744 -Ն որոշում։
2. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն. Բուհական դասագիրք. Երևան, 2008 թ, 288 էջ։
3. Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր Երևան 2011 թ.։
4. Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, «Էդիթ պրինտ» հրատ., 223 էջ։